Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1229[1]-26.12.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.2-րդ կետով.

«7.2) սույն օրենքով նախատեսված կարգով վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև վերջիններիս խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարի տեղակալների բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման.»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 21.2-րդ կետով.

«21.2) սույն օրենքով սահմանված կարգով իրականացնում է վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև վերջիններիս խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների, նախարարի տեղակալների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն և ներկայացնում բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ, որոնք ենթակա չեն հրապարակման.»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 26.3-րդ հոդվածով.

«**Հոդված 26.3. Վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև վերջիններիս խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարի տեղակալների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը**

1. Հանձնաժողովը վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև վերջիններիս խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարի տեղակալների կողմից պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում իրականացնում է վերջիններիս բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնատար անձինք ազատված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրեր ներկայացնելու պարտականությունից, ապա Հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվում է համապատասխան պաշտոնում նշանակում կատարվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում՝ նախկինում ներկայացված հայտարարագրերի հիման վրա:

3. «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով և 8-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով նախարարի տեղակալի, ինչպես նաև վարչապետի, փոխվարչապետների, նախարարների խորհրդականների վերանշանակվելու դեպքում, բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն չի իրականացվում, եթե նույն անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տրամադրումից չի անցել 1 տարի:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը ներառում է վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, վերջիններիս խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարի տեղակալների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրերի վերլուծություն՝ համադրված, առկայության դեպքում, նույն անձանց նախկինում ներկայացված հայտարարագրերի տվյալների հետ:

5. Սույն հոդվածով նախատեսված բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվում է սույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով և պայմաններով՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

6. Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովը բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ է ներկայացնում՝

1) վարչապետի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների դեպքում՝ վարչապետին.

2) վարչապետի, փոխվարչապետների, նախարարների խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների դեպքում՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին.

3) փոխվարչապետների, նախարարների դեպքում՝ համապատասխան պաշտոնում նշանակվելու համար առաջարկություն ներկայացնելու իրավասություն ունեցող անձին.

4) նախարարների տեղակալների դեպքում՝ համապատասխան պաշտոնում նշանակվելու համար առաջարկություն ներկայացնելու և տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող անձանց:

7. Բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ներառում է անձի գույքային դրության և մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերը և դրանց չեզոքացմանն ուղղված առաջարկությունները:»:

Հոդված 4.

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2) Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն չանցած նախարարի տեղակալները և վարչապետի, փոխվարչապետների, նախարարների խորհրդականները, «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով և 8-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով վերանշանակվելու դեպքում, օրենքով սահմանված կարգով անցնում են բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն: